# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Մարգարա համայնքի գյուղապետարանի 2012թ-ի հունվարի 1-ից մինչև 2012թ-ի հուլիսի 1-ը ընկած ժամանակահատվածում կատարած աշխատանքների վերաբերյալ:

2012թ-ի տարեսկզբին Մարգարայի գյուղապետարանը կազմել է գյուղապետարանի 2012թ-ի բյուջեի նախագիծը և ներկայացրել է ավագանու քննարկմանը, որը հաստատվել է ավագանու կողմից, որով և առաջնորդվում ենք:

2012թ-ի բյուջեն կազմում է 27271,6 հազար դրամ:

Ներկայումս նախկին տարիների և ընթացիկ տարվա աշխատավարձի ու սոց վճարների, այլ պարտքեր չունենք:

2012թ-ի հուլիսի 1-ի դրությամբ համայնքի բյուջե է մուտքագրվել 8631,1 հազար դրամ այդ թվում՝

1. հողի հարկ 439,5 հազար դրամ 7,5%
2. գույքահարկ 346,6հազար դրամ 26,9%
3. վարձակալական հողի հարկ 374,7 հազար դրամ 20,8%
4. դոտացիա 7440,3 հազար դրամ 50%
5. Այլ մուտքեր 30,0 հազար դրամ

2012 թ-ի առաջին կիսամյակում ծախսվել է 9144,5 հազար դրամ այդ թվում՝

1. Աշխատավարձ 4102,8 հազար դրամ
2. Սոց վճար 796,6 հազար դրամ
3. Սոցիալական ծախսեր 200,0 հազար դրամ
4. Պարտքեր և նյութեր ֆոնդ բյուջեից 1951,6հազար
5. Այլ ծառայություններ 2093,5 հազար դրամ

2012թ-ի առաջին կիսամյակում բյուջեյի ընթացիկ հաշիվներում ունենք 1508,2 հազար դրամ գումար:

Առաջին կիսամյակի ընթացքում գյուղապետարանը անցկացրել է 5 ավագանու նիստ 13 որոշումով, համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 8 որոշում և 1 կարգադրություն, մուտքագրվել է 55 գրություն, ելք է արվել 57 գրություն:

2012թ-ի առաջին կիսամյակում կատարվել է ներքոհիշյալ աշխատանքները՝

1. Ցուցաբերվել է 200,000/երկու հարյուր հազար/ դրամ սոցալական օգնություն համայնքի անապահով երեք բնակիչներին:

2. «Սերծափնյա» ՁՕԸ-ին աջակցություն է ցուցաբերվել, ջրատարների մաքրման և ջրի վարձի հավաքագրման աշխատանքներին:
3. Անկախության օրվա կազմակերպման համար, համայնքի տարածքում գտնվող հայկական զորամասին ֆինանսական օգնություն է տրամադրվել:
4. Շահագործման է հանձնվել համայնքում նոր խորքային հորը:

5. Վերջին զանգի կապակցությամբ ֆինանսական օգնություն է ցուցաբերվել, 100,000 /հարյուր հազար/ դրամ, 2012թ-ի շրջանավարտներին:

6. Մարգարայի գյուղապետարանը պարբերաբար կազմակերպում է աղբահանման և ճանապարհների բարեկարգման ավազապատման աշխատանքներ:
7. 2012թ-ի գարնանային զորակոչի և զորահավաքի ժամանակ Մարգարա համայնքի կողմից աջակցություն է ցուցաբերվել զորակոչի տարիքի բոլոր զինակոչիկներին Արմավիրի Զին-կոմիսարիատ ներկայացնելու համար:

8. Պարբերաբար, գյուղապետարանի կողմից, օգնությունն է ցուցաբերվել համայնքի այն բնակիչներին, որոնց մոտ խնդիրներ են առաջացել փաստաթղթերի ձևակերպման և նոր փաստաթղթերի ձեռք բերման համար:

9. Ընթացքի մեջ է համայնքում խմելաջրի ցանցի կառուցումը:

Դրատապ խնդիր է նաև համարվում մշակույթի տան վերանորոգումը:

Համայնքի ղեկավար՝ / Խ.Ասատրյան /